

Թաներ Արչամի Հետաքրքրական Յօդուածը «Թարաֆ»ի Մէջ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԸ ՍՊԱՆՆՈՂՆԵՐԸ ԹԱԼԱԹ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԷԺԸ ԼՈՒՃԵՑԻՆ

«Թարաֆ» թերթը Շաբաթ օրուան իր թիւին մէջ հրատարակած էր պատմաբան Թաներ Արչամի նոր մէկ յօդուածը, որ գրի առնուած ըլլալով հանդերձ Հրանդ Տինքի սպանութեան տարելիցին առիթով, ընթերցողի ուշադրութեան կը յանձնէր երկու պնդումներ, որոնց մասին ո՛չ մէկը մտածած է թերեւս:

Այս պնդումներէն առաջինն այն է որ Հրանդ Տինքի սպանութիւնը Պերլինի մէջ Հայերու կողմէ Թալաթ Փաշայի դէմ գործուած սպանութեան փոխադարձութիւնն է: Թէեւ շատ տարիներ անցած են Թալաթ Փաշայի Պերլինի մէջ Սողոմոն Թեհլիրեանի կողմէ սպանութեան վրայէն, բայց Հրանդի դէմ այս ոճրին կազմակերպիչները ուզած են որ ամէն ինչ ըլլայ ճիշդ այնպէս ինչպէս եղած էր Թալաթ Փաշայի սպանութեան ընթացքին: Այլ խօսքով, Հրանդ Տինք սպաննուեցաւ որպէս Թալաթ Փաշայի սպանութեան վրիժառութիւնը: Ինչո՞ւ արդեօք Հրանդ Տինք իր տան առջեւ չսպաննուեցաւ, կամ թէ ինչո՞ւ ոճրագործները զայն առեւանգելով ամայի տեղ մը չտարին ու հոն չսպաննեցին: Եթէ ուզէին, կրնային ընել այս բանը: Բայց չըրին: Ընդհակառակը Հրանդը սպաննեցին իր թերթին խմբագրատան առջեւ, բանուկ պողոտայի վրայ, ամէնուն աչքին առջեւ, կոնակէն զարնելով, ճիշդ այնպէս, ինչպէս եղած էր Թալաթ Փաշայի պարագային: Եւ հոս՝ ահաւասիկ ուրիշ նմանութիւն մը եւս: Սողոմոն Թեհլիրեան Թալաթը սպաննելէ վերջ թէեւ փախչիլ փորձեց, բայց իրեն հրահանգուած էր ձերբակալուիլ ու դատաւարութեան ենթարկուիլ: Հրանդ Տինքը սպաննողն ալ իբրեւ թէ փախաւ, բայց իրեն հրահանգուած էր չփախչիլ, ձերբակալուիլ ու դատաւարութեան ենթարկուիլ: Օկին Սամաթ շատ կը նմանի ուրեմն Սողոմոն Թեհլիրեանին: Հրանդ Տինքը սպաննողներուն նպատակն էր թէ՛ լուծել Թալաթ Փաշայի վրէժը, թէ՛ Հայերու յիշեցնել թէ 1915-ի ցեղասպանութիւնը գործուած էր Հայերը լուցնելու նպատակով: Անոնք ըսել կ'ուզէին. «Մենք այս հանրապետութիւնը հիմնեցինք Հայերու բնաջնջումին վրայ եւ այս հողերուն վրայ 1915-էն վերջ այլեւս ո՛չ մէկ հայու կուտանք խօսելու իրաւունք»:

Թաներ Արչամ այս առաջին բաղդատութենէն վերջ կ'ընէ երկրորդ բաղդատութիւն մըն ալ: Այս անգամ զուգահեռականութիւն մը կը տեսնէ 1915-ի Տիւրքիայի Կուսակալ Տրթ. Րէշիտի ու Հրանդ Տինքի սպանութեան շրջանի Իսթանպուլի Կուսակալ Մուամմէր Կիլերի միջեւ: Այս ալ շատ հետաքրքրական բաղդատութիւն մըն է, որ, ըստ Արչամի, երկու Կուսակալները կը դնէ բացարձակ նմանութեան մը մէջ:

1915-ին Մուսուլի Գերման Հիւպատոսը կը տեղեկագրէ որ Մարտինի ու Տիւրքիայի մէջ աւելի քան 2000 Քրիստոնէաներ, մեծամասնութեամբ Հայ, գիշեր ատեն դուրս հանուեցան իրենց տուններէն ու ոչխարներու պէս մորթուեցան: Դեսպանատունն ալ կը միջամտէ ու կը պահանջէ որ վերջ տրուին Քրիստոնէաներու դէմ սպանդին: Թալաթ Փաշա գաղտնի հեռագիր մը կը քաշէ Կուսակալ Րէշիտին ու կը յիշեցնէ թէ Հայերէ դուրս՝ այլ

Քրիստոնեաներու դէմ պէտք չէ սպանդ կատարուի: Բայց սպանդները կը շարունակուին, Թալաթ Փաշա երկրորդ հեռագիր մըն ալ կը քաշէ: Դարձեալ արդինք չկայ: Այլ Քրիստոնեաներ եւս կը սպաննուին շարունակ: Թալաթ Փաշա երրորդ հեռագիր մըն ալ կը քաշէ ու կը պահանջէ որ Հայերէ դուրս ո՛չ մէկ քրոստոնեայի դէմ սպանդ կատարուի: Ասիկա կտրուկ հրահանգ է, այլապէս Կուսակալը պիտի պատժուի:

Այս հեռագիրները գաղտնի էին ու ծածկագիրներով գրուած էին, եւ բացի քանի մը պաշտօնավարներէ, ո՛չ մէկը կրնար կարդալ զանոնք:

Ա.քչամ կը հարցնէ. Կուսակալ Րէշիտ արդեօք Թալաթ Փաշայի կողմէ պատժուեցա՞ւ իր գործած այս ոճիրներուն համար: Նախ չպատժուեցաւ, ընդհակառակը պարգևներու արժանացաւ: Բայց աւելի վերջ պատժուեցաւ, բայց ո՛չ թէ գործուած ոճիրներուն համար, այլ անոր համար որ ան սպաննուած Հայերուն ինչքերուն ու գոհարեղէններուն վրայ ձեռք դրած էր ու զանոնք իրացուցած էր փոխանակ զանոնք Կեդրոն դրկելու:

Ըստ Ա.քչամի, Հրանդ Տինքի սպանութեան շրջանի Իսթանպուլի Կուսակալ Մուամմէր Կիլերն ալ կը յիշեցնէ Կուսակալ Րէշիտը, որովհետեւ Հրանդ Տինքի սպանութենէն վերջ իշխանութիւնները Կուսակալ Կիլերը յանցաւոր չնկատեցին, ընդհակառակը զայն պատուեցին, աւելին՝ զինքը պարգևատրեցին Ներքին Նախարարի պաշտօն տալով: Բայց անկէ վերջ զինքը պատժեցին ո՛չ թէ Հրանդ Տինքի սպանդի մէջ ունեցած պատասխանատուութեան համար, այլ իրեն դէմ բացուած ապօրինութեան ու կաշառակերութեան ամբաստանութիւններու պատճառաւ:

Ա.քչամ այս երկու հետաքրքրական բաղդատութիւնները ընելէ վերջ կը յիշեցնէ Վարչապետարանի Խորհրդական Համտի Քըրքչի մէկ յայտարարութիւնը ըստ որոյ այս երկրին մէջ պետական աւանդութիւն մը կայ ու այդ աւանդութիւնը կը շարունակուի: Որպէսզի հասկնաք թէ ինչ է այդ, պէտք է պատմութիւն կարդաք»:

Ա.քչամ, այս նախադասութիւնը յիշեցնելէ վերջ կը գրէ.

«Հիմա հասկցա՞ք թէ ինչո՞ւ Հրանդ Տինքի իրական ոճրագործները դեռ չեն հրապարակուած եւ թէ ինչո՞ւ դատավարութիւնը դեռ կը շարունակուի: Թալաթ Փաշա կամ Էրտողան, նոյնն է: Ասիկա պետական աւանդութիւն է: